ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.04.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/78

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.04.2020թ. թիվ 26/26-1/5311-2020 գրությամբ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 08.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1172-2020 գրության հիման վրա, 09.04.2020թ. թիվ 26/26-1/5311-2020 գրությամբ նախաձեռնել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկացրած դիրքորոշմամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 12.02.2019թ. կնքվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/28-3» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր

(հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 10.05.2019թ. կնքված N 1 Համաձայնագրի թիվ 1 Հավելվածով՝ գնման ժամանակացուցով, նախատեսվել է հետևյալը.

չափ. հ/հ	Անվանում	միավոր	Գինը (դրամով)	Ընդհանուր գումար	Անհաժեշտ քանակ 2019		քանակ
					2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	
1	Պոնչո տեսակի թիկնոց	հատ	**3192**	31 920 000		10000	10000

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.04.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/1172-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև կնքված գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները հիմք ընդունելով՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մարտի 30-ին միակողմանի մասնակի լուծել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հետ 12.02.2019թ. կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/28-3» գնման պայմանագրին կից 10.05.2019թ. կնքված N 1 համաձայնագիրը:

Ընկերությունը վկայակոչել է ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, համաձայն որի՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

Ընկերությունը ցանկացել է ընդգծել այն հանգամանքը որ, Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Ընկերությունը նշել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 10.05.2019թ. կնքված N 1 Համաձայնագրի թիվ 1 Հավելվածով՝ գնման ժամանակացուցով, նախատեսված է եղել, որ Ընկերությունը 2019թ. 3-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 10 000 հատ պոնչո տեսակի թիկնոց, մինչդեռ Ընկերության կողմից մատակարարվել է 5000 հատ, այնուհետև Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը, միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը, որի վերաբերյալ ծանուցումը 30.03.2020թ. հրապարակել է տեղեկագրում:

Ընկերությունը նշել է, որ Պայմանագրի 2.1.7 ենթակետով սահմանված է Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու իրավունքը, մինչդեռ Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծել է 12.02.2019թ. կնքված պայմանագրի հիման վրա Կողմերի միջև կնքված Համաձայնագիրը, որը համաձայն Պայմանագրի 8-րդ կետի 8.5-րդ ենթակետի հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Մինչդեռ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի՝ Ընկերությունը գտել է, որ Համաձայնագրի լուծման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Բացի այդ, Ընկերությունը հարկ է համարել նշել, որ վերը նշված 10.05.2019թ. թիվ 1 Համաձայնագիրը կնքելով՝ պոնչո տեսակի թիկնոցի մատակարարման վերջնաժամկետ ժամկետ է սահմանվել 2019թ. 3-դ եռամսյակ:

Այս պարագայում Ընկերությունը խնդրել է քննարկել ստորև ներկայացվող փաստական հանգամանքի իրավաչափության հարցը՝ այն է, եթե ՀՀ պաշտպանության նախարարությունը գտել է, որ պայմանագրի միակողմանի լուծման համար հիմք է հանդիսացել 2.1.7.1 կետի «բ» ենթակետը, այն է՝ ապրանքի մատակարարման

ժամկետները խախտվել են 30 օրից ավելի, ապա ինչու է նույն ՀՀ պաշտպանության նախարարությունը 10.05.2019թ. կնքված N 1 Համաձայնագրի թիվ 1 Հավելվածով՝ գնման ժամանակացույցով նախատեսված մատակարարման ժամկետի ավարտից հետո գրեթե 5-6 ամիս անց, երբ արդեն բաց է թողել Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի ուժով պայմանագիրը լուծելու իրավունքը՝ սահմանված ժամկետի մասով, որոշում կայացրել միակողմանի լուծել «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հետ 12.02.2019թ. կնքված «ԷԱՃԱՊՁԲ-7/28-3» գնման պայմանագրին կից 10.05.2019թ. կնքված N 1 համաձայնագիրը, նույն 2.1.7.1 կետի բ) ենթակետի ուժով:

Ընկերությունը վկայակոչել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետը, որի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Թիվ ՍՑ-ՆԳ-2020/78 ընթացակարգը նախաձեռնվել է 09.04.2020թ.՝ հիմք ընդունելով թիվ 12.02.2019թ. կնքված «ԷԱՃԱՊՁԲ-7/28-3» գնման պայմանագրին կից 10.05.2019թ. կնքված N 1 համաձայնագրի 30.03.2020թ. միակողմանի մասնակի լուծելու հանգամանքը:

Այսինքն՝ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 30.03.2020թ. /տես՝ ՀՀ ՊՆ-ի «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ուղղված թիվ 11/99 գրությունը/, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը միայն 08.04.2020թ. /հիմքում դնելով 30.03.2020թ. Համաձայնագիրը միակողմանի մասնակի լուծման մասին ծանուցումը/, այնինչ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել դեռևս 30.03.2020թ.-ին և հիմքերը պետք է ուղարկվեր մինչև 06.04.2020թ., սակայն՝ (Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտմամբ) ՀՀ ՊՆ-ն որոշում է կայացրել միայն ուշացումով Ընկերության տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Ընկերությունը նշել է, որ հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ ընթացակարգեր /ՍՑ-ԼՕ-2019/233, ՍՑ-ՆԳ-2019/195 և այլն/: Օրինակ՝ թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ընթացակարգի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը /ներկայացվում է համառոտ/.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 26.11.2019թ.-ին թիվ ՊՆ/02/2630-2019 գրությամբ: Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 18.11.2019թ.–ին՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի 12.11.2019թ.–ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝

համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 26.11.2019թ.–ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից ...:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.–ի թիվ 26/26-1/19878-2019 գրությամբ «Պոժմաստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ծածկագրով ընթացակարգը մերժել»:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է սույն ընթացակարգի հիմքերը քննելիս՝ հաշվի առնել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելու փաստական հանգամանքով պայմանավորված իմպերատիվ դրույթը՝ Պատվիրատուի կողմից չպահպանելու հանգամանքը, այսինքն՝ 30.03.2020թ. վերը նշված պայմանագիրը միակողմանիորեն լուծելուց հետո սահմանված հինգ աշխատանքային

օրվա խախտմամբ տվյալները ներկայացնելու հանգամանքը, ինչպես նաև այն հանգամանքը, որ պատվիրատուն միակողմանի մասնակի լուծել է թիվ 1 Համաձայնագիրը և համաձայնագրով նախատեսված 2019թ. 3-րդ եռամսյակը լրանալուց հետո Պատվիրատուի կողմից գրեթե 5-6 ամիս պայմանագիրը չլուծելու հանգամանքը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

Ընկերության կողմից ներկայացվել է նաև վերը շարադրված դիրքորոշման լրացում, որով վկայակոչվել են հետևյալ լրացուցիչ փաստարկները.

Ընկերությունը հայտնել է, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին 31.03.2020թ. ուղղված գրությամբ՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 12.02.2019թ. կնքված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/28-3» ծածկագրով գնման պայմանագրին կից 10.05.2019թ. կնքված թիվ 1 համաձայնագրի Ընկերությունը 2019թ. պետք է մատակարարեր 10.000 հատ ապրանք, որից չի մատակարարել 5.000 ապրանք: Հիմք ընդունելով պայմանագրերի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մարտի 30-ին միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը ...»:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը 08.04.2020թ. ուղղված գրությամբ՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է հետևյալը. «Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և ստորև ներկայացված կազմակերպությունների միջև կնքված գնման պայմանագրերի 2.1.7.1 կետերի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մարտի 30-ին միակողմանի մասնակի լուծել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հետ 12.02.2019թ. կնքված «ԷԱՃԱՊՁԲ-7/28-3» գնման պայմանագրին կից 10.05.2019թ. կնքված թիվ 1 համաձայնագիրը...:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի թիվ 1 Հավելվածով՝ գնման ժամանակացուցով, նախատեսվել է հետևյալը՝ Պոնչո տեսակի թիկնոց - 15000 հատ- 47880000.00 ՀՀ դրամի /ընդհանուր գին/:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև կնքված N 1 Համաձայնագրի թիվ 1 Հավելվածով՝ գնման ժամանակացուցով, նախատեսվել է հետևյալը՝ Պոնչո տեսակի թիկնոց – 10000 հատ - 31920000 ՀՀ դրամ /ընդհանուր գին/:

Վերոհիշյալ միմյանց հակասող փաստերի կապակցությամբ Ընկերությունը հայտնել է, որ իրականում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լուծվել է ոչ թե Պայմանագիրը, այլ Համաձայնագիրը, ինչը հստակ երևում է թե՛ 31.03.2020թ. և թե՛ 08.04.2020թ. գրություններով, մասնավորապես՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը գրություններում նշել է, որ լուծման հիմքում դրվել է այն փաստը, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն պետք է մատակարեր 10000 հատ ապրանք, մատակարարել է 5000 հատ ապրանք և չի մատակարարել 5000 հատ ապրանք: Մինչդեռ՝ Պայմանագրով նախատեսված է եղել մատակարարել ոչ թե 10000 հատ ապրանք, այլ 15000 հատ ապրանք, այսինքն տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից պետք է ամրագրվեր, որ չի մատակարարվել 10000 հատ ապրանք, այլ ոչ թե 5000 հատ ապրանք: Վերոհիշյալից ակնհայտ է, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն վերագրվել է Համաձայնագրով նախատեսված պայմանագրային պարտավորության չկատարումը (նախատեսված 10000 հատ ապրանքի չմատակարարումը):

Վերոհիշյալը վկայում է, որ Պատվիրատուն այլևս չէր կարող լուծել Պայմանագիրը, որովհետև Պայմանագրով և Համաձայնագրով նշված թե՛ մատակարարման և թե՛ վճարման պայմանները փոփոխված են և չեն համապատասխանում միմյանց:

Այլ կերպ ասած, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել պայմանագրային պարտավորության խախտում, քանի որ Պատվիրատուն ՍՊԸ-ին վերագրել է 10000 հատ ապրանք մատակարարելու պարտավորություն, ինչը նախատեսված է Համաձայնագրով, այլ ոչ թե Պայմանագրով:

«Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/78 ընթացակարգի շրջանակներում 16.04.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, որն էլ իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը և դրա լրացումը:

3. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1172-2020 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև կնքված գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մարտի 30-ին միակողմանի մասնակի լուծել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հետ 12.02.2019թ. կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/28-3» գնման պայմանագիրն ու կից 10.05.2019թ. կնքված N 1 համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեկացրել է, որ վերոնշյալ պայմանագրի և համաձայնագրի լուծման վերաբերյալ գրությունը 31.03.2020թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/78 ընթացակարգի շրջանակներում 16.04.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ՆԳ-2020/78 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2020/78 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 12.02.2019թ. կնքվել է «ԷԱՃԱՊՁԲ-7/28-3» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 10.05.2019թ. կնքվել է N 1 համաձայնագիրը, որին կից հավելվածով՝ գնման ժամանակացույցով, 10000 հատ «Պոնչո

տեսակի թիկնոց» ապրանքատեսակի մատակարարման ժամկետ է սահմանվել 2019թ. ըստ եռամսյակների՝ 3-րդ եռամսյակ՝ 10000 հատ:

3. «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ուղղված 31.03.2020թ. թիվ ԴՎԱ/1199 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 12.02.2019թ. կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/28-3» պայմանագրի և դրա հիման վրա 10.05.2019թ. կնքված N 1 համաձայնագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2019թ. մատակարարել 10000 հատ «Պոնչո տեսակի թիկնոց», որից չի մատակարարվել 5000 հատ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.03.2020թ. միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 31.03.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.04.2020թ. թիվ 26/26-1/5311-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1172-2020 գրությունը և կից փաստաթղթերը, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի դիրքորոշումը՝ հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 12.02.2019թ. կնքվել է «ԷԱՃԱՊՁԲ-7/28-3» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 10.05.2019թ. կնքվել է N 1 համաձայնագիրը, որին կից հավելվածով՝ գնման ժամանակացույցով, 10000 հատ «Պոնչո տեսակի թիկնոց» ապրանքատեսակի մատակարարման ժամկետ է սահմանվել 2019թ. ըստ եռամսյակների՝ 3-րդ եռամսյակ՝ 10000 հատ:

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ուղղված 31.03.2020թ. թիվ ԴՎԱ/1199 ծանուցմամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 12.02.2019թ. կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/28-3» պայմանագրի և դրա հիման վրա 10.05.2019թ. կնքված N 1 համաձայնագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2019թ. մատակարարել 10000 հատ «Պոնչո տեսակի թիկնոց», որից չի մատակարարվել 5000 հատ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.03.2020թ. միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 31.03.2020թ. հրապարակվել է ***<u>Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:</u>***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>30 օրից ավելի:</u>

Այսպիսով՝ Ընկերությունը, Պայմանագրի համաձայն՝ պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել 10000 հատ «Պոնչո տեսակի թիկնոց», ապրանքատեսակի մատակարարման ժամկետ է սահմանվել 2019թ. ըստ եռամսյակների՝ 3-րդ եռամսյակ՝ 10000 հատ, որից, ըստ գործում առկա նյութերի, չի մատակարարել 5000 հատ: Այսինքն՝ Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ինչ վերաբերում է Ընկերության այն դիտարկմանը, որ Պայմանագրի 2.1.7-րդ ենթակետով սահմանված է Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու իրավունքը, մինչդեռ Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծել է 12.02.2019թ. կնքված պայմանագրի հիման վրա Կողմերի միջև կնքված Համաձայնագիրը, մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, հարկ եմ համարում նշել, որ նման դիտարկումը անհիմն է, քանի որ Պատվիրատուն Ընկերությանն ուղղված գրությամբ միակողմանի մասնակի լուծել է ոչ թե Համաձայնագիրը, այլ՝ ***Պայմանագիրը***, որի վերաբերյալ ծանուցումը Պատվիրատուի կողմից 31.03.2020թ. հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում:

Անդրադառնալով Ընկերության այն դիտարկմանը, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել պայմանագրային պարտավորության խախտում, քանի որ Պատվիրատուն ՍՊԸ-ին վերագրել է 10000 հատ ապրանք մատակարարելու պարտավորություն, ինչը նախատեսված է Համաձայնագրով, այլ ոչ թե Պայմանագրով, Պայմանագրով նախատեսված է մատակարարել 15000 հատ ապրանք, հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Համաձայն Պայմանագիր 8-րդ կետի 8.5-րդ ենթակետի՝ *պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:*

Համաձայն Պայմանագիր 8-րդ կետի 8.15-րդ ենթակետի՝ *պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:* ***<u>Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:</u>***

Համաձայնագրի 1-ին կետի 1.1 ենթակետը սահմանում է, որ սույն համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է ***<u>Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայնագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով</u>*** Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել ***<u>Պայմանագրի թիվ 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք</u>***, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:

Համաձայնագրի 3-րդ կետի 3.2 ենթակետը սահմանում է, որ սույն ***<u>համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձման ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:</u>***

Համաձայնագրի թիվ 1 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, նախատեսվել է «Պոնչո տեսակի թիկնոց»՝ 10000 հատ, մատակարարումը՝ 3-րդ եռամսյակ, ապրանքի ընդհանուր գումար կազմել է 31 920 000 ՀՀ դրամ. համապատասխան ֆինասավորումը վճարման ժամանակացույցով նախատեսվել է 2019թ.՝ ըստ ամիսների՝ սկսած հուլիս ամսից, բայց ոչ ուշ, քան 10.12.2019թ.:

Վերոշարադրվածից հետևում է, որ Պայմանագիրը կնքվել է առանց ֆինանսական միջոցների առկայության, որի պայմաններում Պայմանագրով նախատեսվել է 8-րդ կետի 8.15-րդ ենթակետը, արդյունքում Ընկերության հետ կնքվել է 10000 հատ ապրանք մատակարարելու վերաբերյալ Համաձայնագիր, հետևաբար 5000 հատ ապրանքի մասով Պայմանագրի 8-րդ կետի 8.15-րդ ենթակետի տեսանկյունից Պայմանագիրը համարվում է լուծված:

Այսպիսով՝ վերը շարադրվածից պարզ է դառնում, որ ***Ընկերության այս դիտարկումը ևս անհիմն է:***

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.04.2020թ. թիվ 26/26-1/5311-2020 գրությամբ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**